Պարույր Սևակ

Վերնագիրը վերջում 5

Քայլում եմ գարնան լեցուն փողոցով
Ու չեմ նկատում մինչև իսկ կանանց,
Որ գեղեցիկ են՝ բարկացնելո՛ւ չափ...
Քայլում եմ այնպես դանդա՜ղ - գլխիկո՜ր
Ասես փողոցն է հանգուցվել ոտիս
Ու խճողում է քայլքս, խճճում...
Արփին շողերի ցած մեկնած ճանկով
Գոռոզ մազերս է թերևս քաշում,
Որ վառի-ցնցի և ուշքի բերի,
Բայց ես չեմ զգում ո՛չ ցավ,
Ո՛չ այրուցք...
Արյունս այնպես դանդաղ է հոսում,
Ինչպես հարթ հովտում գետը ծավալված,
Երբ չես էլ կարող հասկանալ կարգին,
Թե նա ո՛ր կողմից ո՛ր կողմն է հոսում...
Մի բան եմ հիշում
Եվ կիսատ թողած՝
Մտքով կառչում եմ մեկ ուրիշ բանի...
Ինքս ինձ խղճում,
Ուզում եմ, որ ինձ
Մի փո՜քրը սիրեն՝

Թեկուզ նպաստով...

-Այդ... ես եմ թախծում...

18.XII.1959թ.

Թիֆլիս